Ռուբեն Սևակ

Գիշերն իջավ

Գիշերն իջավ անամպ, անհուն,
Բյուր բյուրեղե ի՛նչ նուրբ անուն
Տալ անուրջի այս սուրբ պահուն.
— Ա՛խ, ապրելո՛ւ երջանկություն . . .

Կանէանա նավն հեռակա,
Լիճն երազ մ'է, կա ու չըկա.
Ջուրի շշունջն է լոկ վըկա,
— Շշնջելո՛ւ երջանկություն:

Վերն հազար աստղ, վարն հազար լույս,
Կիսաստվերին մեջ հոգեհույզ
Կը խոսակցին քար, վըտակ, բույս.
— Ա՛խ, իրերո՛ւ երջանկություն . . .

Ու կձայնե մատուռն հստակ.
— Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրության մեջ բովանդակ
Քարանալո՛ւ երջանկություն . . .

Յատուկ Պոէմ